ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 2

# ՀՀԱՄՄՀ-ԳՀԾՁԲ-23/87 ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

**ք. Մեծամոր** **29 սեպտեմբերի 2023թ.**

2023թ-ի սեպտեմբերի 26-29-ը, ՀՀ Արմավիրի մարզի Մեծամոր համայնքի վարչական կենտրոն 1 հասցեում գտնվող Մեծամորի համայնքապետարանի շենքում տեղի ունեցավ Մեծամոր համայնքի Ալաշկերտ բնակավայրի մշակույթի տան քանդման, կառուցման և հարակից տարածքի բարեկարգման նախագծանախահաշվային փաստաթղթերի փորձաքննության խորհրդատվական ծառայությունների ձեռքբերման ՀՀԱՄՄՀ-ԳՀԾՁԲ-23/87 ծածկագրով գնման ընթացակարգի (այսուհետ՝ Ընթացակարգ) գնահատող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) նիստը: Հանձնաժողովի նիստին մասնակցում էին Հանձնաժողովի հետևյալ անդամները.

| | |
|---|---|
| Է. Հովհաննիսյան՝ | Մեծամոր համայնքի ղեկավարի առաջին տեղակալ, |
| Ս. Սահակյան՝ | Մեծամորի համայնքապետարանի քաղաքաշինության-հողաշինության բաժնի գլխավոր մասնագետ-ճարտարապետ, |
| Վ. Ղազարյան՝ | Մեծամորի համայնքապետարանի գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի առաջատար մասնագետ, |
| Ս. Սարգսյան՝ | Մեծամորի համայնքապետարանի կրթության, մշակույթի, սպորտի և երիտասարդության հարցերի բաժնի առաջատար մասնագետ, |
| Վ. Բաղդասարյան՝ | Մեծամորի համայնքապետարանի կրթության, մշակույթի, սպորտի և երիտասարդության հարցերի բաժնի առաջատար մասնագետ: |

Հանձնաժողովի նիստը նախագահում էր Է. Հովհաննիսյանը: Հանձնաժողովի նիստին ներկա էր Հանձնաժողովի քարտուղար, Հ. Գուլաբյանը՝ «ՓՐՈՄՈՈՒՇՆ» ՍՊԸ-ի ներկայացուցիչը:

Հաշվի առնելով, որ Հանձնաժողովի կազմը բաղկացած է հինգ անդամից, իսկ Հանձնաժողովի նիստին մասնակցում էին Հանձնաժողովի բոլոր անդամները, հետևաբար՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի N 526-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի 26-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված պահանջների համաձայն Հանձնաժողովի նիստը համարվեց իրավազոր և հայտարարվեց բացված:

## 1. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովը որոշեց հաստատել Հանձնաժողովի նիստի հետևյալ օրակարգը.

1. Հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին:

2. Գնման հայտով սահմանված՝ Ընթացակարգի շրջանակում գնվելիք գնման առարկաների գների մասին:

3. Ընթացակարգին ներկայացված հայտեր պարունակող ծրարները գնահատելու մասին:

4. Ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին:

5. Կատարված հարցումների, պարզաբանումների, հիմնավորումների և հրավերում կատարված փոփոխությունների, հակաօրինական գործողությունների, ներկայացված բողոքների մասին:

Կողմ՝ 5, դեմ ՝ 0:

## 2. ԳՆՄԱՆ ՀԱՅՏՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ՝ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՇՐՋԱՆԱԿՈՒՄ ԳՆՎԵԼԻՔ ԳՆՄԱՆ ԱՌԱՐԿԱՆԵՐԻ ԳՆԵՐԻ ՄԱՍԻՆ

2023թ-ի սեպտեմբերի 26-ին, ՀՀ Արմավիրի մարզի Մեծամորի համայնքապետարանի վարչական կենտրոն 1 հասցեում գտնվող Մեծամորի համայնքապետարանի շենքում ժամը 17:30-ին նախագահը նիստը հայտարարեց բացված, տեղեկացրեց, որ գնման գործընթացն իրականացվում է ՀՀ «Գնումների մասին» օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն և հրապարակեց գնման հայտով սահմանված միավոր ծառայությունների գնման գների հանրագումարը.

| Հ/Հ | Գնման առարկայի անվանումը | Գնման հայտով սահմանված գնման գինը (ՀՀ դրամ) |
|---|---|---|
| 1 | Մեծամոր համայնքի Ալաշկերտ բնակավայրի մշակույթի տան քանդման, կառուցման և հարակից տարածքի բարեկարգման նախագծանախահաշվային փաստաթղթերի փորձաքննության խորհրդատվական ծառայությունների մատուցում | 700,000.00 |

Ընթացակարգի հայտերը բացվել են www.armeps.am կայքի միջոցով հրավերով սահմանված օրը և ժամին:

Կողմ՝ 5, դեմ ՝ 0:

## 3. ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ՀԱՅՏԵՐ ՊԱՐՈՒՆԱԿՈՂ ԾՐԱՐՆԵՐԸ ԳՆԱՀԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովը արձանագրեց, որ ՀՀԱՄՄՀ-ԳՀԾՁԲ-23/87 ծածկագրով գնման ընթացակարգին մասնակցելու հայտեր չեն ներկայացվել:

Կողմ՝ 5, դեմ ՝ 0:

## 4. ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ ՉԿԱՅԱՑԱԾ ՀԱՅՏԱՐԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովը որոշեց.

1. Հիմք ընդունելով ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին կետի 3-րդ ենթակետով սահմանված պահանջները՝ Ընթացակարգը հայտարարել չկայացած:

Կողմ՝ 5, դեմ ՝ 0:

## 5. ԿԱՏԱՐՎԱԾ ՀԱՐՑՈՒՄՆԵՐԻ, ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄՆԵՐԻ, ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ԵՎ ՀՐԱՎԵՐՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ՀԱԿԱՕՐԻՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովը արձանագրեց, որ.

1. Ընթացակարգի հրավերում փոփոխություններ տեղի չեն ունեցել:

2. Գնման ընթացակարգի շրջանակում հարցումներ չեն ներկայացվել և պարզաբանումներ չեն տրվել:

3. Գնման գործընթացի շրջանակներում հակաօրինական գործողություններ չեն հայտնաբերվել:

4. Գնման գործընթացի վերաբերյալ ներկայացված բողոքներ չեն եղել և դրանց վերաբերյալ կայացված որոշումներ չեն ընդունվել:

Կողմ՝ 5, դեմ ՝ 0:

*Հանձնաժողովի նախագահ՝*

Է. Հովհաննիսյան ____________

*Հանձնաժողովի անդամներ՝*

Ս. Սահակյան ____________

Վ. Ղազարյան ____________

Ս. Սարգսյան ____________

Վ. Բաղդասարյան ____________

*Հանձնաժողովի քարտուղար՝*

Հ. Գուլաբյան ____________